

յիշէ մեր այդ օծումը, բայց զեռ չմորթած. «Օծանկէ իւրով, կ'ըսէ, զանդամ նոցա (անասնոց), եւ այնպէս զենեալ ուտեն» (Լոյս, 1905, էջ 1114):

Բայց զենման կը յաջորդէր նախ վերոյիշեալ սեղանի օրհնութիւնը, յետ որոյ՝ կ'ըսէ Տաթեւոյ վանականը՝ «կերակրիմք ի նմանէ» (Հրց. 657):

11. — Բաժին վահագ եւ քահանայից: — Հին օրէնքը սահմանած էր՝ որ Ղեւտացիք յատուկ կալուած չունենային, եւ կերակրէին տաճարի պատարագներէն (ԲՕր. ԺԸ, 1-5): Նոյնը սովորական էր բոլոր հին կրօններու պաշտօնէից: Հայ քրիստոնէի մերն ալ կը սնանէին «ի զոհից եւ ի պտղոց» (Սահ. 129). որոնք երբ Լուսաւորչին յայտնեցին՝ թէ քրիստոնեայ լինելով, ընտանեօք անօթի պիտի մնային, նա ապահովեց անոնց վիճակը «սուրբ պատարագացն երախայրեօք եւ այլովք ընծայեալք պտղովք» (անդ, 127-32):

Այդ նուիրաց ամէն ժամանակ մասնակից եղած են քրիստոնեայ Հայաստանի ժողովուրդը ալ. ասոնց եւս՝ ինչպէս Ղեւտացւոց՝ սահմանուած էին եկեղեցական օրինօք որոշ մասունք մատաղներէ եւ ուրիշ պարգեւներէ, — բաց ի բուն ազգայնէ՝ ուսկից պիտի ուտէին միայն, ա-